

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐՆ ՍՏԱՑԱՆ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԸ

ԲԱՐՉՐԱՑՆԵՆՔ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆԸ

ԼՆԻՆԳՐԱԿ, 24 դեկտեմբերի (ՏԱՍՍ). — Խիստ պատժելի Հայրենիքի ստոր դավաճան Բերիային ու նրա գործակիցներին՝ աչդպիսին էր բանվորների, ինժեներների, գիտնականների, ուսանողների, ծառայողների, բոլոր աշխատավորների միահամուռ պահանջը:

Բերիայի դավադրական խմբի գործով ՍՍՌՄ Գերագույն դատարանի կայացրած դատավճիռը, որը հրապարակվել է այսօր, Լինինգրադում ընդունվեց խոր գոհունակությամբ: Գործարանների և ֆաբրիկաների ցեխերում տեղի ունեցան ժողովներ, որոնց մասնակիցները հայտարարեցին, որ լիովին հավանություն են տալիս միջազգային իմպերիալիզմի գործակալների ստոր ավազակախմբի նկատմամբ սովետական դատարանի կայացրած դատավճիռին:

Կիրովյան գործարանի շտամպների ու հարմարանքների ցեխում ելույթ ունեցավ անվանի նշագծող բանվորուհի ընկ. Ֆեդոտովան: Նա ցասումով էր խոսում Բերիայի ու նրա գործակիցների հանցավոր մեքենայությունների մասին, որոնք թունձրություն էին կատարել սովետական ժողովրդի երջանկության դեմ:

— Նրանք ցանկանում էին սովետական ժողովրդից խլել երջանիկ կյանքը, որը նվաճվել է Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ, — հայտարարեց ընկ. Ֆեդոտովան: — Մեր կացվելով անհրաժեշտ ապացույցներով, այդ ճիվաղները ստիպված էին խոստովանել իրենց արյունալի ոճրագործությունները: Սովետական դատարանի կայացրած արդարացի դատավճիռը ի կատար է ածվել: Սովետական հողում չկա և չի կարող տեղ լինել դավաճանների ու մատնիչների համար:

Օրեցօր աճում և ամրապնդվում է մեր Հայրենիքը: Հանուն Կոմունիզմի կատարվող աշխատանքը բերում է իր հիանալի պտուղները: Ժողովուրդների անխախտ բարեկամության մեջ, Կոմունիստական պարտիայի շուրջը համախմբվածություն մեջ է մեր ուժը: Ոչ ոք չի կանգնեցնի սովետական ժողովրդի հաղթական առաջընթացը դեպի լուսավոր ապագան:

— Սովետական դատարանը կատարեց ժողովրդի կամքը, — մեխանիկական հավաքման ցեխում կայացած ժողովում հայտարարեց կարուսելավոր ընկ. Շալցիցկը: — Ստոր դավաճանները ոչնչացված են: Թող իմանան թշնամիները, որ ամեն մեկի, ով թունձրություն կկատարի մեր Հայրենիքի դեմ, սպասում է նույնպիսի բախտ: Դավաճան Բերիան և նրա գործակիցները պատժվեցին ըստ արժանվույն: Մենք էլ ավելի կբարձրացնենք ուսուցիչական զգոնությունը, էլ ավելի մեծ հաստատակամություն կամրապնդենք Սովետական պետության հզորությունը:

ՈՉ ՄԻ ԴԱՎԱԴԻՐ ԶԻ ԿՐՈՂ ԿԱՍԵՅՆԵԼ ՄԵՐ ԱՌԱՋԼՆԹԱՅԸ

Աշխատանքի ընդմիջման ժամին կարբիդի ցեխի հրաբորբոք վառարանների առջև հավաքվեցին բազմաթիվ բանվորներ: Ցեխի պարտկազմակերպության քարտուղար ընկ. Վ. Գրիգորյանը կարգաց ՍՍՌՄ Գերագույն դատարանի հատուկ դատական ատյանի դատավճիռը ժողովրդի անարդ թշնամի Բերիային և նրա դավադիր խմբի անդամներին մահվան դատապարտելու մասին:

— Մենք՝ կարբիդագործներս, անսահման գոհունակությամբ անք ընդունում ՍՍՌՄ Գերագույն դատարանի հատուկ դատական ատյանի վճիռը, — ժողովում հայտարարեց առաջին վառարանի բրիգադիր ընկ. Մ. Պետրոսյանը: — Դավաճաններն իրենց արժանի պատիժն ստացան: Այդ պատիժը արտահայտում է սովետական ամբողջ ժողովրդի միահամուռ կամքը:

Անուհետև հանդես եկավ հնագույն կարբիդագործ ընկ. Պ. Հարությունյանը: Նա ասաց, որ ժողովրդի ոչ մի ստոր թշնամու չի հաջողվել խլել մեր ազատությունը, մեր Հայրենիքի անկախությունը, մեր հերոսական աշխատանքի հիանալի արդյունքները: Թող իմանան նրանք, ում հարկ է գիտենալ, շեշտեց ընկ. Հարությունյանը, որ մենք՝ սովետական մարդիկս, անխախտ ու կուռ շարքերով համախմբված ենք հարազատ Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության շուրջը և ներքին ու արտաքին ամեն գույնի թշնամիների մեքենայություններն ու շարագործությունները շնորհիվ հաղթանակները չեն կարող խանգարել խաղաղ, ստեղծագործական աշխատանքը:

ներն ու շարագործությունները չեն կարող խանգարել մեր խաղաղ, ստեղծագործական աշխատանքը:

Բանվոր-ծառայողների բազմամարդ ժողովներ տեղի ունեցան կարբիդի գործարանի նաև մյուս ցեխերում: Մեխանիկական ցեխի խառատ նորարար ընկ. Հ. Սերոբյանը, պատմելով մարդասպանների ոհմակի դավադիր գործողությունների մասին, բանվորներին կոչ արեց էլ ավելի բարձրացնել ուսուցիչական զգոնությունը, կրկնապատկել բոլոր ուժերը արտադրական առաջադրանքները կատարելու և գերակատարելու, Հայրենիքի հզորությունը էլ ավելի ամրապնդելու համար:

— Մեծ ու հզոր է մեր Կոմունիստական պարտիան, մեծ ու անպարտելի է մեր ժողովուրդը, — ասաց իր ելույթում տեխնիկական բաժնի պետ ընկ. Գ. Բաղրամյանը, — պարտիայի դեկավարությամբ սովետական ժողովուրդը հաղթականորեն առաջ է շարժվում դեպի կոմունիզմ: Այդ հաղթական առաջընթացի ժամանակ նա իր ճանապարհից մաքրել է ոչ քիչ թվով դավաճանների, գործակալների ու լրտեսների: Բայց այն, ինչ երկար տարիների ընթացքում կատարել են իմպերիալիզմի վարձկան Բերիան և նրա գայլային ոհմակը, մարդկային երևակայությունից դուրս է: Մենք շնորհակալություն ենք հայտնում պարտիային ու կառավարությանը՝ դավադիրների այդ գարշելի խումբը ժամանակին մերկացնելու և ոչնչացնելու համար:

ԿՈՏԱՐՎԵՅ ԿՈԼՏԵՏԵՍԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՏԱՅՔ (ՄԵՐ ԱՆԻ. ԲՈՂ.). — Շրջանի կոլտնտեսականները, մեխանիկատորները և բանվոր-ծառայողները, խոր ատելությամբ լցված Հայրենիքի դավաճան Բերիայի և նրա գործակիցների նկատմամբ, մեծ գոհունակությամբ ընդունեցին ՍՍՌՄ Գերագույն դատարանի հատուկ դատական ատյանի կողմից ժողովրդի այդ նողկալի թշնամիների նկատմամբ քրեական առավելագույն պատիժ՝ դնդակահարության վճիռ կայացնելու և այն ի կատար ածելու լուրը:

Այդ առթիվ շրջանի կոլտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում և հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցան բազմամարդ ժողովներ:

Քանաքեռի կոլտնտեսականների ժողովում անասնապահական ֆերմայի վարիչ Հ. Ներսիսյանն ասաց.

— Օտարերկրյա կապիտալիզմի վարձկաններ Բերիան և նրա գործակիցները, որոնք ցանկանում էին մեր երկրում վերականգնել կապիտալիզմը, ստացան իրենց արժանի պատիժը: Մեր Հայրենիքի թշնամիները թող լավ իմանան, որ սովետական արդարագատությունը և ժողովուրդը ամենախրատագույն պատժի կենթարկեն բոլոր

նրանց, ովքեր կփորձեն դավաճանել մեր սոցիալիստական Հայրենիքին:

— Կոլտնտեսային կարգերի ոխերիմ թշնամի Բերիային և նրա գործակիցներին զեղակահարելու վճիռը և այն ի կատար ածելը, — ասաց բրիգադիր Շ. Պապոյանը, — բոլոր կոլտնտեսականներին միակ ցանկություն էր: Թող բնաջնջվեն երկրի երեսից Կոմունիստական պարտիայի և Սովետական ժողովրդի բոլոր թշնամիները: Մենք՝ կոլտնտեսականներս, այսուհետև կաշխատենք ավելի նվիրված, կբարձրացնենք կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը:

Ժողովում հայրենասիրական ելույթներ ունեցան կոլտնտեսականներ Խ. Անտոնյանը, Ն. Թովմասյանը և ուրիշներ:

Բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև Հրազդան, Չառ, Չրվեթ և մյուս գյուղերում: Ամենուրեք կոլտնտեսային աշխատավորները հավանություն տվեցին սովետական դատարանի արդար վճիռն և պարտավորվեցին կրկնապատկել իրենց ուժերը ՍՄԿՊ Կենտկոմի Մեպտեմբերյան պլենումի որոշումը անշեղորեն կենսագործելու, երկրի ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ տալու համար: